

## *Summary*

After Artsakh had joined to Russia the imperial government pursued a policy to eliminate the clan of Meliks, which had disastrous consequences for the Armenians of the region.

Armenians of Artsakh lost not only the possibility of the restoration of Statehood but also the guiding power.

The last fragments of Armenian Statehood were irreversibly destroyed.

The representatives of the nobility who lived with the country's and the people's concerns left the arena.

### **ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՄԱՐՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

**1(25) 2012**

**ՀՏԴ 371.31:940.53(479.243)**

**Պատմության դասավանդման մեթոդիկա**

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱՋՄՈՒՄ ԱՐՅԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՄԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԴՐՎԱԿՆԵՐԸ (ԿՈՒՐՍԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ) 9-րդ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԻ  
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Ա.Ա.Կայան**

Ավելի քան 67 տարի է անցել Հայրենական մեծ պատերազմի ավարտից, սակայն այդ դաժան պատերազմի հետևանքները և արհավիրքները մարդկության հիշողությունից չի անհետանում: Չի մոռացվի այն, որովհետև այդ հրեշավոր պատերազմը խեց միլիոնավոր մարդկանց կյանք և ամայացրեց ու ավելեց մի շարք նրկրներ:

Պատմությունը հարուստ է բազմաթիվ ու բազմապիսի պատերազմներով, որոնցից յուրաքանչյուրն անկրկնելի է, ինքնատիպ թե իր յուրահատկությամբ, թե ծավալման ընթացքով ու մասշտաբներով, թե իր հետևանքներով: Այս առումով Հայրենական մեծ պատերազմը, որպես նրկրորդ համաշխարհային պատերազմի էական ու անբաժանելի բաղկացուցիչ մաս, իր նշանակությամբ ու հետևանքներով աննախադեմ երևույթ էր ժողովուրդների ու ազգերի բազմամյա տարեկրության մեջ:

Ցուրաքանչյուր առարկա, հատկապես պատմությունը, աշակերտների հայրենասիրության ողով դաստիարակելու հնարավորություն է տալիս: Միանգամայն ակնհայտ է, որ այս խնդիրների իրականացման գործում կարևորագույն տեղ պետք է ունենա «Հայոց պատմության» դասընթացի ուսումնասիրությունը:

Հայրենական մեծ պատերազմի թեման 9-րդ դասարանում անցնելու ժամանակ ուսուցիչը պետք է աշակերտների մեջ սեր և նվիրվածություն արթնացնի հայրենիքի, իր ժողովրդի նկատմամբ:

Այդ առումով անշափ կարևոր է Հայրենական մեծ պատերազմում արցախահայության դրվագների ներկայացումը: Ուսուցիչը պետք է հանգամանորեն պատմի ֆաշիստական Գերմանիայի՝ ԽՍՀՄ վրա ուխտադրժորեն 1941թ. հունիսի 22-ին հարձակվելու հանգամանքները:

Հայրենիքի ազատության և անկախության համար ուրիշ կանգնեց խորհրդային բազմամիլիոն ժողովուրդը: Աշակերտներին պետք է հիշեցնել, որ իրենց պապերից ու հարազատներից շատերը փառքով վերադարձան: Օրինակներ է բերվում այն սպաներին ու բանակայիններին, որոնք շքանշաններով ու մեղալներով վերադարձել են, իսկ շատերը հերոսարար ընկել մարտերում:

Կորսկի շրջանում տեղի ունեցած ճակատամարտը Հայրենական մեծ պատերազմի և ամբողջ նրկրորդ Համաշխարհային պատերազմի մեծագույն ճակատամարտերից մեկն է:

Կորսկի աղեղում ծավալվեցին դաժան մարտեր, որտեղ խորհրդային ժողովուրդը, նրա զինված ուժերը հասան վիթխարի պատմական հաղթանակի: Այդ ճակատամարտը որոշենց նրկրորդ համաշխարհային պատերազմի հետագա ընթացքը ի օգուտ հակահիտլերյան կողմիցիայի:

Կորսկի ճակատամարտում նրկու կողմերից մասնակցել են չորս միլիոն մարդ, 69 հազար իրանող և ականանետ, ավելի քան 13 հազար տանկ և ինքնագնաց իրանող և մոտ 12 հազար

մարտական ինքնաթիռներ: Կուրսկի տակ գործում էր ավելի քան ֆաշիստական 100 դիվիզիա, որը կազմում էր խորհրդա-գերմանական ռազմաճակատում գործող դիվիզիաների ավելի քան 43 տոկոսը<sup>1</sup>:

Կուրսկի աղեղում ծավալվեցին մինչ այդ չտեսնված տանկային և օդային մարտեր:

Հնայած ֆաշիստական հրամանատարության ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ թաքցնելու հարձակման նախապատրաստությունը և հասնել հանկարծակի հարվածի, խորհրդային հետախուզությանը հաջողվեց բացահայտել թշնամու պլանները: Վիթլսարի աշխատանք տարբեց Խորհրդային Միության ռազմական հզորության ամրապնդման ուղղությամբ: 1943թ. հուլիսին խորհրդային բանակը հակառակորդին գերազանցում էր՝ անձնական կազմով՝ 1.2, հրանոթներով ու ականանետներով՝ 1.9, տանկերով ու ինքնազնաց հրետանիով՝ 1.7, մարտական ինքնաթիռներով՝ 3.4 անգամ<sup>2</sup>:

1943թ. հուլիսի 5-ի առավոտյան գերմանա-ֆաշիստական զորքերը հարձակման անցան:

Հարձակման առաջին օրը խորհրդային զորքերն այդ ճակատամարտում ոչնչացրին հակառակորդի 586 տանկ և 204 ինքնաթիռ: Դա կուրսկի ճակատամարտի առաջին օրն էր և գերմանա-ֆաշիստական բանակի առերից մեկը<sup>3</sup>:

Մարտերի ընթացքում խորհրդային զորքերը ջախջախեցին թշնամու 30 դիվիզիա, այդ թվում՝ 7 տանկային: Գերմանա-ֆաշիստական զորքերը կորցրեցին մոտ կես միլիոն զինվոր ու սպա, 1.5 հազար տանկ, 30 հազար հրանոթ, ավելի քան 3.7 հազար ինքնաթիռ<sup>4</sup>:

Կուրսկի հերոսական ճակատամարտի մասնակիցների շարքում խորհրդային բոլոր ժողովուրդների հետ միասին իրենց պատվավոր տնին ունեն Լեռնային Ղարաբաղի բազարի գավակները:

Ուսուցիչը պարտավոր է կուրսկի ճակատամարտի համապատկերի վրա ներկայացնել Արցախի բազարի զավակների հերոսական արարքները: Մասնավորապես ավիացիայի մարշալ Սերգեյ Խուլյակովին (Արմենակ Խամբերյան): Նա ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մեծ Թաղար գյուղում 1902թ.: Հայրենական մեծ պատերազմի առաջին իւկ ամիսներին՝ 1941թ. հոկտեմբերի 29-ին, գնդապետ Ս.Խուլյակովին շնորհվել է ավիացիայի գեներալ-մայորի զինվորական կոչում: Մշշնամու դեմ մղվող օդային մարտերում երևան է զայխս Խուլյակովի բազարիկ տաղանդը: 1943թ. փետրվարի 27-ին նրան շնորհվում է ավիացիայի գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում և նույն ժամանակ էլ նշանակվում է Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար: Այդ պատասխանատու պաշտոնում նա գույց է տալիս արիության, հերոսության և օդային դժվար մարտեր վարելու բարձր վարպետություն, որի անունը սարսափ էր տարածում թշնամու վրա:

Նրա դեկավույամբ Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերը փայլուն հաղթանակ են տանում կուրսկի աղեղի օդային ահեղ ճակատամարտում, Վորոնեժի և տափաստանային ռազմաճակատներում, Դնեպրի համար մղված մարտերում, Յասսի-Զիշնեյան ռազմագործողություններում<sup>5</sup>:

ԽՍՀ Գերազույն խորհրդի նախագահությունն իր 1946թ. օգոստոսի 19-ի հրամագրով Ս.Խուլյակովին շնորհում է ավիացիայի մարշալի զինվորական կոչում:

Երեք մեծ տերությունների՝ ԽՍՀՄ-ն, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեկավարների Յալթայի կոնֆերանսում, 1945թ. փետրվախն, Խորհրդային Միության կողմից կոնֆերանսի մասնակիցների թվում էր նաև ավիացիայի մարշալ Ս.Խուլյակովը<sup>6</sup>:

Հնայած նրա վերոհիշյալ բոլոր ծառայություններին, նա զրպարտվեց և դարձավ անձի պաշտամունքի զին:

Կուրսկի աղեղում մղվող կրիվների մասնակից էր Իվան Կոնստանդինի Շահումյանը: Նա ծնվել է 1913թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Պառավաթումբ գյուղում: Եթե սկսեն Մեծ Հայրենականը, Իվան Շահումյանը տրկի պաշտպանների շարքերը:

<sup>1</sup> История второй мировой войны 1939-1945г., Москва, 1976, с. 178.

<sup>2</sup> „Вопросы истории”, N 8, 1983, c. 22.

<sup>3</sup> Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941-1945), Երևան, 1954, էջ 253:

<sup>4</sup> Курская битва, под ред. Паротькина И.В., Москва, 1970, с. 6.

<sup>5</sup> Ղ.Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, «Բանքեր Հայաստանի արևիլների», հ. 1, Երևան, 1985, էջ 122:

<sup>6</sup> Ա.Մալխասյան, Սովորական բանակի հայ գործիչները, Երևան, 1963, էջ 218:

1943թ. ամռանը 69-րդ դիվիզիայում մասնակցում է Կուրսկի աղեղի նշանավոր ճակատամարտին, ազատագրում է Դմիտրև-Լգովսկի շրջանը և շարունակում հետապնդել թշնամուն: Այդ ժամանակ Իվան Շահումյանի ստորաբաժանումը պատասխանատու առաջադրանք է ստանում անցնել ֆաշիստների ստորաբաժանման թիկունքը և, հանկարծակի գործողություններ ծավալելով, խուճապահար անել նրանց: Եթե թշնամին խուճապի է մատնվում, հարձակման է անցնում ամբողջ դիվիզիան<sup>1</sup>:

Երկու ժամ տևող համար ճենամարտերից հետո դիվիզիայի ստորաբաժանումներն ազատագրում են Զիմլիշա խոշոր բնակավայրը: 69-րդ զվարդիական դիվիզիան, որի մեջ էր նաև Իվան Շահումյանի ստորաբաժանումը, հմտորեն 1943թ. օգոստոսին գնտանցում են Սոմը և մոտենում Դնեպրին:

ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահությունը, բարձր գնահատելով ավագ սերժանտ Իվան Շահումյանի կատարած խիզախությունը, իր՝ 1943թ. հոկտեմբերի 30-ի հրամանագրով նրան շնորհեց Խորհրդային Միության հերոսի բարձր կոչում:

Կուրսկի տակ տեղի ունեցած հերոս մարտերի ակտիվ մասնակից էր նաև դարձագի Պատլեն Սարգսյանը, որը ծնվել է Ստեփանակերտում, մինչև պատերազմն աշխատում էր կուսակցության շրջանային կոմիտեում որպես վիճակագիր: Նա մասնակցել է Ստալինգրադը հիտլերականներից ազատագրելու մարտերին, դրանից հետո այն դիվիզիան, որի մեջ գտնվում էր նաև Պ. Սարգսյանը, շարժվում են դեպի Բելգորոդի շրջանը, այնուհետև մասնակցում Կուրսկի աղեղում տեղի ունեցած արյունահեղ մարտերին:

Այդ մարտերում Պատլեն Սարգսյանը դեկավարում էր հրաձգային գնդի 299-րդ մարտկոցը<sup>2</sup>:

Նրանք խլում են թշնամական երկու «Վազր», ոչչացնում մի ինքնազնաց հրանոթ, երեք ավտոմեքենա, ավելի քան 100 ֆաշիստական զինվոր ու սպա: Սարգսյանի մարտկոցի մարտիկները ներկայացվում են պարզևատրման:

Պաշտպանական մարտերը շարունակվում են մինչև հուլիսի վերջը փոփոխակի հաջողություններով: Այնուհետև հակառակորդը ծնկի է բերքում և բելգորոդ ազատագրվում է<sup>3</sup>:

1943թ. հուլիսի 12-ին Կուրսկի աղեղի հարավային շրջանում, Պրոխորովկայի մոտ, տեղի ունեցավ կատաղի մարտեր, որտեղ Վորոնեժի ռազմաճակատի զորքերը հղոր հակահարված հասցրին հարձակման անցած հակառակորդին:

Հակառակորդը չէր սպասում, որ Պրոխորովկայի ուղղությամբ կհանդիպի 5-րդ զվարդիական տանկային բանակին: Այդ դաժան տանկային մարտերում իր խիզախությամբ աչքի ընկավ Արցակի Գիշի գյուղի բնակիչ Եփրեմ Ղարիբյանը: Մի արիթով գեներալ Զերյանկովսկին ասել է. «Եթե մենք շատ ունենայինք այնպիսի հրամանատարներ, ինչպիսին Եփրեմ Ղարիբյանն է, այն ժամանակ մենք կիհնենք ոչ թե Վորոնեժի տակ, այլ Բելգորում»:

Կիրովագրադի մոտ, երբ Խորհրդային զորամասերը մարտեր էին մղում քաղաքի ազատագրման համար, Եփրեմ Ղարիբյանը առաջին գծում էր: Հակառակորդի արձակած արկերից խոցվեց Ղարիբյանի տանկը և այն անմիջապես փառվեց: Այդ ժամանակ էլ հերոսի մահով ընկավ տանկիստ մայոր Եփրեմ Ղարիբյանը: Նա թաղված է Միջորին-Ռոզ գյուղի հյուսիս-արևմտյան մասում՝ ներքայական գերեզմանոցում: Եփրեմ Ղարիբյանը կատարել է շուրջ 100 տանկային գրոհ, որոնց ընթացքում խփել է հակառակորդի չորս տասնյակից ավելի տանկ: Այդ սկզբագրծությունների համար Եղարիբյանը պարզևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի և կարմիր աստղի երկու շքանշաններով<sup>4</sup>:

Արցախահայության ներկա սերունդը իրավունք ունի հպարտանալ համերկրացի, ծնունդով Ուս գյուղից, Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանով:

Գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանը Օրյոլ-Կուրսկ աղեղում մղված մարտերի աչքի ընկած հերոսներից է: 27-րդ զվարդիական գնդի 2-րդ զումարտակի դասակեներից մենքի հրամանատարն էր: 1943թ. հուլիսի 12-ին համար մարտեր են սկսվում Օրյոլի մարզի շրջակայրում: Գվարդիայի լեյտենանտ Հովհաննիսյանն իր մարտիկների հետ մոտենում է զերմանական պաշտպանության առաջավոր գծին, հաղթահարում փշալարների խիտ ցանցը և ներխուժում թշնամու խրամատները: Սկսվում են ուժեղ մարտեր, որի ընթացքում

<sup>1</sup> «Սովորական Ղարաբաղ», 2 մարտի, 1985:

<sup>2</sup> Գ. Բագալով, Կիև, 1985, շ. 10.

<sup>3</sup> «Բանվեր», 25 ապրիլի, 1980:

<sup>4</sup> «Սովորական Ղարաբաղ», 29 մայիսի, 1985:

Վ.Հովհաննիայանի վեցյակը ոչնչացնում է թշնամու 63 զինվոր ու սպա և գերի վերցնում 18 հիտլերական: Այդ մարտում Վ.Հովհաննիայանն ավտոմատի կրակով շարքից հանում է թշնամու 38 զինվոր ու սպա<sup>1</sup>:

Օրյոլի մարզի Ույանովսկի շրջանի Բելի Վերլս գյուղը պաշտպանող գնմանական երկու վաշտ գնդացրային և ավտոմատային կրակով խանգարում էին մեր հետևակի առաջևադաշտում: Գվարդիայի լեյտենանտ Վ.Հովհաննիայանը որոշում է թշնամուն հարկած հասցնել թիկունքից: Թշնամին շփոթվում է: Հիտլերականները կորցնում են 70 զինվոր ու սպա: Վ.Հովհաննիայանի մարտիկները գրավում են մեկ հաստոցավոր գնդացիր և երեք ավտոմատ: Առաջ շարժվելով՝ խիզախների յոթնյակը նոնակներով պայթեցնում է ռազմամթերքով բնոնված երկու ավտոմերենա:

Ույանովսկի շրջանային կենտրոնի համար մղած մարտերում Վլադիմիր Հովհաննիայանի ստորաբաժանումը ոչնչացնում է զերմանական 360 և գերի վերցնում 290 զինվոր ու սպա: Ինքն անձամբ ոչնչացնում է զնդացրային երկու կրակակետ և հակառակորդի մի քանի տասնյակ զինվոր ու սպա: Գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Հովհաննիայանը զոհվում է կարաչ քաղաքի համար մղված մարտերում 1943թ. օգոստոսի 6-ին, մարտական առաջադրանք կատարելու ժամանակ:

Հայրենիքը քարձը գնահատեց Վ.Հովհաննիայանի անձնուրաց, հերոսական սխրագործությունները: ԽՄՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1943թ. օգոստոսի 27-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Կորսկի աղեղի շրջանում ծավալված մարտերին մասնակցում էր այն ժամանակ զնդապետ Համազասպ Բաբաջանյանը: Նրա տանկային բրիգադը կորսկի ճակատամարտին մասնակցում էր 1-ին տանկային քանակի կազմում: Բաբաջանյանի տանկային մարտերին մասնակցել են նաև մեր համանրկրացիներ Տիգրան Թաղևոսյանը և Վահարշակ Աղարենկյանը: Տիգրան Թաղևոսյանը ծնվել է Մարտունու շրջանի Աշան գյուղում: Բելայա-Յերկով քաղաքի մոտ Տ.Թաղևոսյանի տանկի անձնակազմը ոչնչացրեց 5 զնդացիր, մի քանի հրանոթ և թրթուրների տակ ճզմեց տասնյակ ֆաշիստների: Այդ սխրագործության համար արժանացավ հայրենիքի պարզեցին՝ «Խիզախության համար» մեդալին: Նա շատ մարտերի մասնակցեց ու հատկապես աչքի լնկավ կորսկի աղեղի մարտերի ժամանակ: Խիզախ տանկիստն այդ օրնին պարզեատրվեց «Կարմիր դրոշի» շքանշանով: 1944թ. վերադարձավ տուն որպես 2-րդ կարգի հաշմանդաւ<sup>2</sup>:

Վահարշակ Աղարենկյանը ծնվել է 1920թ. Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում: Մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին, մարտնչել կորսկ-օրյոլ ուղղությամբ:

Կորսկի աղեղում մղվող կատաղի կրիվների մասնակցների թվում էր Խսահակ Միրզոյանը, Մովսես Օհանյանը, Նիկոլայ Ղուկասյանը:

Խսահակ Միրզոյանը ծնվել է Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղում: Կորսկի մարտերում ցուցաբերած քաջության ու խիզախության համար գվարդիայի կապիտան Խսահակ Միրզոյանը պարզեատրվել է «Կարմիր աստղ» և «Հայրենական պատերազմի» առաջին աստիճանի շքանշաններով<sup>3</sup>:

Մովսես Օհանյանը ծնվել է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: Նա մասնակցել է Եյուսիսային կովկասի Դոնի Ռոստովի և կորսկի աղեղի ճակատամարտերին:

Նիկոլայ Ղուկասյանը ծնվել է Հադրութի շրջանի Ծամձոր գյուղում: Նրա մարտական ուղին սկսեց Բելոռուսիայից, անցավ կորսկ-օրյոլ աղեղով, կալինգրադով: Ն.Ղուկասյանը մասնակցել է նաև Բելոյինի գրավմանը: Կորսկի ճակատամարտում ցուցաբերած քաջության և խիզախության համար Նիկոլայ Ղուկասյանը պարզեատրվել է «Փառքի» 3-րդ աստիճանի շքանշանով: Խիզախ մարտիկը ակտիվ մասնակցություն է ունեցել Քյոնիսբերգի գրավման մարտերին և պարզեատրվել «Մարտական ծառայությունների համար» և «Քյոնիսբերգի գրավման համար» մեդալներով:

Երբ հայրենիքի հողն ազատագրվում է թշնամուց Նիկոլայ Ղուկասյանը վերադարձում է հայենի գյուղը և անցնում խաղաղ աշխատանքի<sup>4</sup>:

<sup>1</sup> Գիրք հերոսների մասին, Երևան, 1964, էջ 290:

<sup>2</sup> «Սովորական Ղարաբաղ», 16 մայիսի, 1985:

<sup>3</sup> Նոյն տեղում, 6 հունվարի, 1985:

<sup>4</sup> «Կոլտնտեսական», 22 ապրիլի, 1985:

Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում 1904թ.:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մասնակցել է մի շարք ճակատամարտերի, բայց հատկապես աչքի է ընկել Կուրսկի աղեղում: 1942թ. հոկտեմբերին նշանակվում է 74-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար: 1943թ. ձմռանը Կուրսկի աղեղում նրա դիվիզիան փայլուն կերպով կատարում էր իր առաջ դրված խնդիրները: 1943թ. փետրվարին Ղազարյանին շնորհում են գեներալ-մայոր կոչումը<sup>1</sup>:

Դիվիզիայի մարտական գործողությունները հմտորեն դեկավարելու համար 1943թ. նրան շնորհվեց «Կարմիր դրոշի» շքանշանը:

Կուրսկի ճակատամարտում հետև մղելով հիտլերյան հետևակի և 150 տանկի գրոհները, մեծ կորուստ պատճառում թշնամուն<sup>2</sup>:

Կուրսկի ճակատամարտին վերոհիշյալներից բացի մասնակցել են շատ դարաբաղջիներ, որոնց սկսագործություններով դաստիարակվել են մի քանի սերունդներ: Կուրսկի մոտ գերմանա-ֆաշիստական զորքնի ջախջախումն ուներ միջազգային խոշորագույն նշանակություն: Այն ավելի բարձրացրեց Խորհրդային Միության հեղինակությունը: Գերմանական զորքնի գլխավոր խմբավորման ջախջախումը Կուրսկի շրջանում հող է պատրաստել խորհրդային զորքների հաջող հարձակողական գործողությունների համար, որոնց նպատակն էր գերմանացիներին դուրս քշել երկրից և հասնել վերջնական հաղթանակի:

Պատմության ուսուցիչներիս պարտքն է ցույց տալ, որ բոլոր ժամանակներում արցախյան զինվորի փառքը հանուն գոյատևման և անկախության համար մղված մարտերում անմահ է:

Ներկայում Բարվից մշտապես հնչեցվող սպառնալիքների պայմաններում, Հայրենական մեծ պատերազմում արցախահայության հերոսական դրվագներով մատադ սերնդին դաստիարակելին ունի կարևոր նշանակություն:

Մերկացնելով թուրքերի կեղծիքները, սերտելով նախանցյալ ժամանակների հերոսական դասերը՝ արցախահայության ներկա սերունդն առավել վճռական է դառնում պաշտպանելու հող հայրենիքն, կերտելու ԼՂՀ լուսավոր ապագան:

Патриотическое воспитание учащихся на уроках истории в 9-ом классе на примерах  
участия арцахцев в Великой Отечественной войне  
(Курская битва)

**А.А.Касян**

*Резюме*

Для армянского народа XX век сыграл существенную роль в воспитании подрастающего поколения в духе патриотизма. Во время Великой Отечественной войны в борьбе против фашизма арцахское армянство проявило отвагу и стойкость духа. Воспитанное на их примере поколение в годы Арцахской войны ничем не уступило своим предшественникам. Родную землю защищали по заветам отцов и дедов.

The scraps of Artsakh participation in the Second World War  
(according to the specimen of Kursk battle) for the patriotic upbringing of the 9<sup>th</sup> grade learners  
**A.A.Kasyan**

*Summary*

The 20th century had a great role in the patriotic upbringing of the younger generation. During the Great Patriotic war fighting against the fashism people of Artsakh showed immense courage and strength. Following

<sup>1</sup> „Советский Карабах”, 15 мая, 1984.

<sup>2</sup> Գիրք հերոսների մասին, էջ 54:

their sample our people didn't fall behind their ancestors, during the Artsakh struggle. They protected their motherland according to the traditions of the older generation.

**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՄԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

1(25) 2012

**ՎՏԴ 371.31:325**

**Պատմություն**

**«16-19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ»  
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՅՈՒՄ**

**Ա.Բ.Առարտամյան**

Ազգային դպրոցը դա կրթական օջախ է, որի խնդիրը ոչ միայն կրթելու, ուսուցանելու և դասավանդելու գործառույթներն են, այլև ազգային արժեների պահպանումն ու փոխանցումը սերունդներին, ազգային զաղափարախոսության մշակումը: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզրացման գործում գերակա խնդիր է դաշնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը<sup>1</sup>: Հայոց պատմությունը ուսումնական այն առարկաներից է, որի ընթացքում ոչ միայն ուսումնասիրքում է հայրենիքի պատմությունը, այլև ուսուցչի հմտությունների շնորհիվ սովորողների մոտ ձևավորվում է ազգային մտածողություն: Հայոց պատմություն դասավանդող ուսուցիչը պետք է հստակ գիտակցի պատմության դասին ներկայացվող պահանջները՝ հայեցի դաստիրակություն, ազգային և համամարդկային արժեների հաղորդում, պետական մտածողություն, պետականամետ կողմնորոշում:

Ազգային-պատագրական պայքարը բովանդակող թեմաները կարելոր տեղ են գրավում հայոց պատմության դասավանդման գործնթացում: Այս թեմաների մատուցման ժամանակ ուսուցչից պահանջվում են յուրօրինակ մանկավարժական հմտություններ, մասնագիտական բարձր կարողություններ: Ուսուցիչը պետք է գիտակցի որ իր խնդիրը միաժամանակ՝ աշակերտների մոտ խոր հայրենասիրության սերմանումն է, անցյալի փորձից պատմական դասեր քաղելու գիտակցում:

Հայոց պատմության դասին ազատագրական պայքարն ընդգրկող թեմաները պետք է ներկայացնել այնպես, որ սովորողները համակվեն բուռն հայրենասիրության, ազգապաշտության խորը զգացումներով, միաժամանակ կարողանան ամբողջական ընկալել պատմական իրադարձությունների պատկերը, տիրապետեն փաստներին, կարողանան քննության ենթարկել դրանք, հստակ ընկալեն դեպքերի ժամանակագրական սահմանները, վեր հանեն տվյալ ժամանակաշրջանի ազատագրական շարժման առանձնահատկությունները, կարողանան իրար համադրել դրանք և համեմատականներ անցկացնել տարբեր ժամանակաշրջաններում ազատագրական շարժումների միջև, վեր հանեն պայքարը պայմանափորող ներքին և արտաքին գործոնները, պատճառահետևանքքային կապերը, պայքարի արդյունքները, դատել ճնշքելու մեջ ու կորուստների մասին, կատարել համապատասխան նզրահանգումներ: Դասի ընթացքում ուսուցիչն օգտագործում է այն բոլոր հնարավոր միջոցներն ու մեթոդները, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում, որպեսզի բոլոր սովորողներն անմիջապես ուսուցման պրոցեսում յուրացնեն ուսումնասիրվող առարկայի հիմնական դրույթները<sup>2</sup>:

Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի «Հայոց պատմության» թեմատիկ ծրագրով ընդգրկված են հայ ազգային- ազատագրական շարժումները 16-19-րդդ. առանձին 3 գլուխներով: Սույն հոդվածում փորձել ենք անդրադառնալ 16-19-րդդ. ազգային-ազատագրական շարժումների պատմության լուսաբանման մի քանի հարցերի և ուսուցչի կողմից դրանք ներկայացնելու

<sup>1</sup> Պատմություն, հասարակագիտություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Եր., 2007, էջ 6:

<sup>2</sup> Տես՝ Պետական պատմություն, Պ.Ի. Պուտիկյան, Երևան, 1998, ս. 304: